



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱԶՅԻՆ ԱՄԵՐԻԿԱԶՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԵՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՀՆԷՔ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Շաբաթ, 14 Յունիսը տօնն է հայ ժողովուրդի առաջին քրիստոնեայ թագաւորին ու թագուհիին՝ Ս. Տրդատի եւ Ս. Աշխենի, նաեւ՝ տօնը՝ անուանակոչութեան Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն» մատրան:

Հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի, Շաբաթ երեկոյեան ժամը 7-ին, Ս. Պատարագ պիտի մատուցուի եւ մատաղօրհնէք պիտի կատարուի Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն» մատրան մէջ:

Պիտի պատարագէ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան:

DIVINE LITURGY AT THE PRELACY CHAPEL ON THE FEAST OF ST. DERTAD AND ST. ASHKHEN

On Saturday, June 14th, the Armenian Church will celebrate the Feast of St. Dertad and St. Ashkhen, the first Christian king and queen of the Armenian nation. This feast is also the name day of the Prelacy “St. Dertad and St. Ashkhen” Chapel.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and *madaghorhnek* at the Chapel at 7:00 p.m.

Rev. Fr. Ardag Demirjian, Pastor of St. Mary’s Church in Glendale, will celebrate Divine Liturgy.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ 90 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՒ ԵՌԱԳՈՅՆ ԴՐՕՇԱԿԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸՆ ՆԵՐՍ

Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան 90-րդ տարեդարձին առիթով, Կիրակի, Մայիս 25-ին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն

մէջ Հանրապետական Մաղթանք եւ Եռագոյն դրօշի օրհնութիւն կատարուեցաւ: Նաեւ ընթերցուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր անկախութեան 90ամեակի պատգամը:

Օրէնճ Քառնթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ եւ հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի, եւ մասնակցութեամբ Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Բարձր. Տ. Օշական Ս. Արք. Զօլոյեանի ու եկեղեցական հայրերու, հանդիսաւորապէս նշուեցաւ Հայաստանի առաջին Հանրապետութեան հռչակման 90-րդ տարեդարձը, կատարուեցաւ Հանրապետական Մաղթանք եւ Եռագոյն դրօշակի օրհնութեան սրտառուչ արարողութիւն:

«Նշանաւ ամենայաղթ Խաչիւղ քո, Քրիստո՛ս» շարականին երգեցողութեամբ, եւ ընկերակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.-ի արի-արեւոյշներու, Հայաստանի Հանրապետութեան Եռագոյն դրօշակը, ընկերակցութեամբ Ամերիկեան, Արցախի Հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակներուն, թափօրով վերամբարձ բերուեցաւ եկեղեցի եւ կանգնեցաւ Դասին մէջ: Կանոնական աղօթքներէ եւ գոհաբանական յատուկ բարեմաղթութիւններէ ետք, Առաջնորդ Սրբազան Հայրը օրհնեց Եռագոյն դրօշակը, Հայաստանի Հանրապետութիւնը, պետական աւագանին, հրամանատարները, հայոց զօրքը եւ հայ ժողովուրդը:



Առաջնորդ Սրբազանը այս առիթով պատգամ էր յղած Թեմիս բոլոր գաւակներուն, որ ընթերցուեցաւ բոլոր եկեղեցիներուն մէջ: Պատգամին մէջ Սրբազան Հայրը կ'անդրադառնար Մայիս 28-ի ոգիին եւ մեր ժողովուրդի մղած գոյութեան պայքարին, շեշտելով այն իրողութիւնը, որ մեր ազգի կեանքը իր ամբողջութեանը մէջ եղաւ պայքար վասն

ճշմարտութեան, վասն հաւատքի, վասն ազատութեան հաստատման եւ վասն գոյատեւման: Նոյն այդ պայքարը սակայն կանգ չառաւ, այլ շարունակուեցաւ նորօրեայ հերոսներով եւ նոր Սարդարապատներով, յանգելով ազատ ու անկախ Արցախի կերտման, որուն յաղթութեան 20ամեակն է նաեւ այս տարի: Առանց Մայիս 28-ի ոգիին, մենք կը կորսնցնենք մեր հայրենիքը, մեր ազգը, մեր գոյութիւնն իսկ, շեշտեց Սրբազան Հայրը:

Պատարագի աւարտին, Սրբազանը նախագահեց նաեւ Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսէի եւ 1918 թուականին Հայաստանի անկախութեան համար մղուած բոլոր միւս ճակատամարտներուն ընթացքին զոհուած քաջամարտիկներու, ինչպէս նաեւ Արցախի եւ նոր օրերու նահատակ բոլոր ազատամարտիկներու հոգւոց խաղաղութեան ի հանգիստ մատուցուած հոգեհանգստեան արարողութեան:

ON THE 90TH ANNIVERSARY OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA

**THANKSGIVING PRAYERS FOR THE REPUBLIC AND
BLESSING OF THE FLAG IN ALL PRELACY CHURCHES**

On Sunday, May 25th, the Feast of Holy Etchmiadzin as well as the 90th anniversary of the first Republic of Armenia was celebrated in all Prelacy churches with thanksgiving prayers for the Republic and the blessing of the Armenian flag.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Divine Liturgy and thanksgiving prayers for the Republic at Forty Martyrs Church in Orange County, and conducted the blessing of the flag ceremony. H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, also participated in the Liturgy.



The ceremony began with Homenetmen scouts carrying the Armenian, American, Artsakh, and Homenetmen flags into the church, accompanied by the singing of hymns. Following the offering of prayers and thanksgiving, the Prelate blessed the Armenian flag and offered his well wishes to the Republic of Armenia including the Parliament, military, and the citizens.

In his message, which was read in all Prelacy churches, the Prelate spoke of the spirit of our struggle, stressing that the history of the Armenian people has been a struggle for the truth, for our faith, for freedom, and for our survival. This same struggle resumed with new heroes and new triumphs during the liberation of Artsakh, the 20th anniversary of which was celebrated this year, said the Prelate. The Prelate concluded that if we lose the spirit of May 28, we risk losing our homeland, our nation, and our existence.

At the conclusion of Divine Liturgy, the Prelate presided over the requiem service during which prayers were offered for those who lost their lives fighting at Sardarabad, Pash Abaran, Gharakilise, and in all the battles for independence in 1918, as well as in Artsakh.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՓԱՌԱՏՕՆ
ՀՈՒԿՈՒՄԻՆԻՍԻ LITTLE ARMENIA ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ**

Հայաստանի Անկախութեան տօնին առիթով, ու յաջորդաբար երրորդ տարին ըլլալով, Կիրակի, Յունիս 1-ին, փառատօն-տօնակատարութիւն մը

տեղի պիտի ունենայ Հոլիվուտի Little Armenia շրջանին մեջ, առաւօտեան ժամը 11-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վիգէն Ա. Քիւյ. Վասիլեան ներկայ պիտի ըլլայ փառատօսին:

Փառատօսը կը հովանաւորէ Լոս Անճելըսի Զաղաքապետական Խորհուրդի նախագահ Էրիք Կարսեթի, որուն ընտրաշրջանին մաս կը կազմէ «Փոքրիկ Հայաստան» թաղամասը:

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL IN LITTLE ARMENIA

The third annual Armenian Independence Day Festival will take place on Sunday, June 1st, in the Little Armenia district of Hollywood, from 11:00 a.m. to 7:00 p.m.

Pastor of St. Garabed Church Archpriest Fr. Vicken Vassilian will attend on behalf of the Prelate.

The festival is being sponsored by Los Angeles City Council President Eric Garcetti, whose district encompasses Little Armenia.